ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/18Շ

ք. Երևան

«20» նոյեմբերի 2018թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Վառյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված շինարարական աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 45 օր հետո:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 տարին: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 146897934 (հարյուր քառասունվեց միլիոն ութ հարյուր իննսունյոթ հազար ինը հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ, որից 24482989 (քսանչորս միլիոն չորս հարյուր ութսուներկու հազար ինը հարյուր ութսունինը) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և

արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	«ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,	ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբ. 6/2
Կենտրոնական գանձապետարան	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՎՀՀ 02565518	Հ/Հ 163007045608
ՀՍ 900011020733	ՀՎՀՀ 01567429
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ139+350-կմ 139+450 վթարված հենապատի վերականգնման աշխատանքների կատարման (2018թ.)

ՀՀ դրամ

№ Հ/Հ	Աշխատանքների անվանում	Չափի միավորը	Քանակ	Միավորի գինը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
1. Նախապատրաստական աշխատանքներ					
1	Շինարարական հրապարակում և նրան հարող տարածքում մրգատու և պտղատու ծառերի կտրում մինչև 16սմ տրամագծով	հատ	20.0	32351	647020
2	Շինարարական հրապարակում և նրան հարող տարածքում մրգատու և պտղատու ծառերի կտրում մինչև 24սմ տրամագծով	հատ	3.0	51750	155250
3	Շինարարական հրապարակում և նրան հարող տարածքում մրգատու և պտղատու ծառերի կտրում մինչև 32սմ տրամագծով	հատ	6.0	71176	427056
4	Շինարարական հրապարակում և նրան հարող տարածքում մրգատու և պտղատու ծառերի կտրում բարձր 32սմ	հատ	3.0	258371	775113
5	Կտրված ծառերի արմատների հանում մինչև 24սմ տրամագծով և տեղափոխում մինչև 5մ	հատ	23.0	359	8257
6	Կտրված ծառերի արմատների հանում մինչև 32սմ տրամագծով և տեղափոխում մինչև 5մ	հատ	6.0	609	3654
7	Կտրված ծառերի արմատների հանում 32սմ տրամագծով ավելի և տեղափոխում մինչև 5մ	հատ	3.0	993	2979
8	Փշալարից պարիսպի քանդում ժամանակավոր ճանապարհի կառուցման համար	գծմ	21.0	3385	71085
9	Գույություն ունեցող փշալարից պարիսպի վերականգնում	գծմ	0.0	3385	0
10	Ե/բ ազդանշանային սյուների ապամոնտաժում	հատ	7	3546	24822
11	Գոոսթյուն ունեցող ե/բ ազդանշանային սյուների բարձում ձեռքով ի/թ վրա, տեղափոխում մինչև 5կմ և բեռնաթափում պահեստում հետագա օգտագործման համար	տն	0.84	7899	6635
12	Գուոյթյուն ունեցող բետոնե պարապետի քանդում և տեղափոխում դեպի հետլիցք	$մ^3$	3.0	33530	100590
13	Ժամանակավոր ճանապարհի կառուցման համար հողային պաստառի համահարթեցում խտացումով	$մ^2$	900.0	113	101700
14	Ժամանակավոր ճանապարհի կառուցման համար կոպճաավազային պատվածքի իրականացում h=20սմ	$մ^2$	900.0	1029	926100
				Ընդամենը՝1	3250261.2
2. Կառուցման աշխատանքներ					

15	Խրամուղու փորում 9^{4}-II կ. գրունտներում 0.5մ^3 տարողությամբ էքսկավատորով բարձելով ի/թ վրա	մ^3	250.0	641	160250
16	Գրունտի տեղափոխում լցակույտ 3կմ միջին հեռավորությամբ	տն	350.0	1290	451500
17	Աշխատանքներ լցակույտում I կ. գրունտի տեղափոխման ժամանակ	մ^3	250.0	50	12500
18	Խրամուղու փորում 6^{3}-IV կ. գրունտներում 0.5մ^3 տարողությամբ էքսկավատորով բարձելով ի/թ վրա	մ^3	830.0	1327	1101410
19	Գրունտի տեղափոխում պահուստ հետագա հետլիցքի համար 3կմ միջին հեռավորությամբ	տն	1660.0	1290	2141400
20	6^{3}-IV կ. գրունտի բարձում պահուստում 0.5մ^3 տարողությամբ էքսկավատորով ի/թ վրա	մ^3	830.0	1327	1101410
21	Գրունտի տեղափոխում պահուստից դեպի շինհրապարակ հետլիցքի համար 3կմ միջին հեռավորությունից	տն	1660.0	1290	2141400
22	Հենապատի հետլիցքի համար V կարգի խոշորաբեկոր գրունտների փորում հանքավայրում 0.5մ^3 տարողությամբ էքսկավատորով բարձելով ի/թ վրա	մ^3	1750.0	1750	3062500
23	Գրունտի տեղափոխում հանքավայրից դեպի շինհրապարակ հետլիցքի համար 3կմ միջին հեռավորությունից	տն	4025.0	1290	5192250
24	Հողմնահարված և քայքայված V կ.ժայռային գրունտի մշակում 0.5մ^3 տարողությամբ էքսկավատորով բարձելով ի/թ վրա	մ^3	116.0	1750	203000
25	Գրունտի տեղափոխում պահուստ հետագա հետլիցքի համար 3կմ միջին հեռավորությամբ	տն	266.8	1290	344172
26	Հողմնահարված և քայքայված V կ.ժայռային գրունտի բարձում պահուստում 0.5մ^3 տարողությամբ էքսկավատորով ի/թ վրա	մ^3	116.0	1750	203000
27	Գրունտի տեղափոխում պահուստից դեպի շինհրապարակ հետլիցքի համար 3կմ միջին հեռավորությունից	տն	266.8	1290	344172
28	Հենապատի հիմքերի տակ նախապատրաստական շերտի տեղադրում խտացված խճից h=20սմ միջին հաստությամբ	մ^3	63.0	13380	842940
29	Հենապատի հիմքի իրականացում B-20 դասի միաձույլ բետոնից	մ^3	894.1	73024	65294300
30	Հենապատի իրանի իրականացում B-20 դասի միաձույլ երկաթբետոնից	մ^3	491.0	77212	37911092
31	Հյուսված ամրանային ցանցեր ամրան A-I	տն	1.1	651570	737717
32	Հյուսված ամրանային ցանցեր ամրան A-III	տն	4.2	632710	2680235
33	Գրունտի հետ շփվող բետոնյա մակերեսների քսուկային ջրամեկուսիչ շերտի իրականացում բիտումով 2 անգամ	մ^2	1264.8	3869	4893546
34	Ջրամեկուսացման պաշտպանիչ շերտ մեկ շերտ խիտ ստվարաթղթից	մ^2	1264.8	1676	2119820
35	Դեֆորմացիոն կարան բիտումով ներծծված 3սմ հաստությամբ տախտակից	մ^2	2.1	8705	18663
36	Քարային լիցքի իրականացում դրենաժի համար 30սմ հաստությամբ քարերով տրամագծով ոչ փոքր 15սմ-ից	մ^3	97.7	7254	708636
37	Հենապատերի մեջ դրենաժային խողովակների տեղադրում պլաստիկ խողովակներից d=15սմ	մ	64.2	2902	186308
38	Յուղային կավային շերտի տեղադրում դրենաժի համար 20սմ հաստությամբ	մ^3	65.1	24341	1585233
39	Հենապատի հետլիցք բուլդոզերով խոշորաբեկոր կամ խճաքարային ցամակուրդային գրունտներից	մ^3	2701.0	78.0	210775
40	Գրունտի խտացում պնևմոգլդոններով h=30սմ 6 անցումով	մ^3	2700.9	327	883204

41	Գրունտների ջրում 30% չափով	մ³	810.5	422	342050
42	Նոր պարապետների տեղադրման համար 6ᵃ-IV կ. կարգի գրունտի փորում փոսորակներում ձեռքով խրամուղում , թողնելով գրունտը տեղում	մ³	17.4	6255	108788
43	Պարապետի հիմքերի տակ ավազակոպճային հարթեցնող շերտի տեղադրում	մ³	2.9	4836	14157
44	Նոր պարապետների հիմքերի տեղադրում խամքարից	մ³	15.1	22890	344898
45	Նոր պարապետների տեղադրում խամքարից	մ³	28.9	40622	1175178
46	Պարապետի սվաղ ցեմենտաավազային շաղախով	մ²	200.2	2902	580930
47	Ժամանակավոր արգելապատ բլոկների տեղադրում h=0.8մ,L=3մ	հատ	35.0	93569.53	3274934
48	Ժամանակավոր արգելապատ բլոկների ապամոնտաժում h=0.8մ,L=3մ	հատ	30.0	2579	77370
				Ընդամենը՝2	140449739
				Ընդհանուրը՝1 և 2 բաժիններով	143700000
*Միավորի արժեքը ներառում է շահույթը և Ա.Ա.Հ.					

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ139+350-կմ 139+450 վթարված հենապատի վերականգնման աշխատանքների կատարման

(ԸՆԴՀԱՆՈՒՐ)

<< դրամ

№№ ը/կ	Ա խատանքների անվանում	Չափի միավորը	Քանակ	Միավորի գինը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
1. Նախապատրաստական աշխատանքներ					
1	Շինարարական հրապարակում և նրան հարող տարածքում մրգատու և պտղատու ծառերի կտրում մինչև 16սմ տրամագծով	հատ	20.0	32351	647020
2	Շինարարական հրապարակում և նրան հարող տարածքում մրգատու և պտղատու ծառերի կտրում մինչև 24սմ տրամագծով	հատ	3.0	51750	155250
3	Շինարարական հրապարակում և նրան հարող տարածքում մրգատու և պտղատու ծառերի կտրում մինչև 32սմ տրամագծով	հատ	6.0	71176	427056
4	Շինարարական հրապարակում և նրան հարող տարածքում մրգատու և պտղատու ծառերի կտրում բարձր 32սմ	հատ	3.0	258371	775113
5	Կտրված ծառերի արմատների հանում մինչև 24սմ տրամագծով և տեղափոխում մինչև 5մ	հատ	23.0	359	8257
6	Կտրված ծառերի արմատների հանում մինչև 32սմ տրամագծով և տեղափոխում մինչև 5մ	հատ	6.0	609	3654
7	Կտրված ծառերի արմատների հանում 32սմ տրամագծով ավելի և տեղափոխում մինչև 5մ	հատ	3.0	993	2979
8	Փշալարից պարիսպի քանդում ժամանակավոր ճանապարհի կառուցման համար	գծմ	21.0	3385	71085

9	Գույություն ունեցող փշալարից պարիսպի վերականգնում	գծմ	21.0	3385	71085
10	Ե/բ ազդանշանային սյուների ապամոնտաժում	հատ	7	3546	24822
11	Գոոսթյուն ունեցող ե/բ ազդանշանային սյուների բարձում ձեռքով ի/թ վրա, տեղափոխում մինչև 5կմ և բեռնաթափում պահեստում հետագա օգտագործման համար	տն	0.84	7899	6635
12	Գուոյթյուն ունեցող բետոնե պարապետի քանդում և տեղափոխում դեպի հետլիցք	$մ^3$	3.0	33530	100590
13	Ժամանակավոր ճանապարհի կառուցման համար հողային պաստառի համահարթեցում խտացումով	$մ^2$	900.0	113	101700
14	Ժամանակավոր ճանապարհի կառուցման համար կոպճաավազային պատվածքի իրականացում h=20սմ	$մ^2$	900.0	1029	926100
				Ընդամենը՝1	3321346.2
2. Կառուցման աշխատանքներ					
15	Խրամուղու փորում $9^{դ}$-II կ. գրունտներում 0.5$մ^3$ տարողությամբ էքսկավատորով բարձելով ի/թ վրա	$մ^3$	290.0	641	185890
16	Գրունտի տեղափոխում լցակույտ 3կմ միջին հեռավորությամբ	տն	406.0	1290	523740
17	Աշխատանքներ լցակույտում I կ. գրունտի տեղափոխման ժամանակ	$մ^3$	290.0	50	14500
18	Խրամուղու փորում $6^{գ}$-IV կ. գրունտներում 0.5$մ^3$ տարողությամբ էքսկավատորով բարձելով ի/թ վրա	$մ^3$	988.0	1327	1311076
19	Գրունտի տեղափոխում պահուստ հետագա հետլիցքի համար 3կմ միջին հեռավորությամբ	տն	1976.0	1290	2549040
20	$6^{գ}$-IV կ. գրունտի բարձում պահուստում 0.5$մ^3$ տարողությամբ էքսկավատորով ի/թ վրա	$մ^3$	988.0	1327	1311076
21	Գրունտի տեղափոխում պահուստից դեպի շինհրապարակ հետլիցքի համար 3կմ միջին հեռավորությունից	տն	1976.0	1290	2549040
22	Հենապատի հետլիցքի համար V կարգի խոշորաբեկոր գրունտների փորում հանքավայրում 0.5$մ^3$ տարողությամբ էքսկավատորով բարձելով ի/թ վրա	$մ^3$	2034	1750	3559500
23	Գրունտի տեղափոխում հանքավայրից դեպի շինհրապարակ հետլիցքի համար 3կմ միջին հեռավորությունից	տն	4678.2	1290	6034878
24	Հողմնահարված և քայքայված V կ.ժայռային գրունտի մշակում 0.5$մ^3$ տարողությամբ էքսկավատորով բարձելով ի/թ վրա	$մ^3$	116	1750	203000
25	Գրունտի տեղափոխում պահուստ հետագա հետլիցքի համար 3կմ միջին հեռավորությամբ	տն	266.8	1290	344172
26	Հողմնահարված և քայքայված V կ.ժայռային գրունտի բարձում պահուստում 0.5$մ^3$ տարողությամբ էքսկավատորով ի/թ վրա	$մ^3$	116	1750	203000
27	Գրունտի տեղափոխում պահուստից դեպի շինհրապարակ հետլիցքի համար 3կմ միջին հեռավորությունից	տն	266.8	1290	344172
28	Հենապատի հիմքերի տակ նախապատրաստական շերտի տեղադրում խտացված խճից h=20սմ միջին հաստությամբ	$մ^3$	74.4	13380	995472
29	Հենապատի հիմքի իրականացում B-20 դասի միաձույլ բետոնից	$մ^3$	1038.5	73024	75835424
30	Հենապատի իրանի իրականացում B-20 դասի միաձույլ երկաթբետոնից	$մ^3$	580.0	77212	44782960
31	Հյուսված ամրանային ցանցեր ամրան A-I	տն	1.315	651570	856815
32	Հյուսված ամրանային ցանցեր ամրան A-III	տն	4.92	632710	3112933

33	Գրունտի հետ շփվող բետոնյա մակերեսների քսուկային ջրամեկուսիչ շերտի իրականացում բիտումով 2 անգամ	մ^2	1469	3869	5683561
34	Ջրամեկուսացման պաշտպանիչ շերտ մեկ շերտ խիտ ստվարաթղթից	մ^2	1469	1676	2462044
35	Դեֆորմացիոն կարան բիտումով ներծծված 3սմ հաստությամբ տախտակից	մ^2	2.49	8705	21675
36	Քարային լիցքի իրականացում դրենաժի համար 30սմ հաստությամբ քարերով տրամագծով ոչ փոքր 15սմ-ից	մ^3	113.46	7254	823039
37	Հենապատերի մեջ դրենաժային խողովակների տեղադրում պլաստիկ խողովակներից d=15սմ	մ	73.7	2902	213877
38	Յուղային կավային շերտի տեղադրում դրենաժի համար 20սմ հաստությամբ	մ^3	75.64	24341	1841153
39	Հենապատի հետլիցք բուլդոզերով խոշորաբեկոր կամ խճաքարային ցամակուրդային գրունտներից	մ^3	3138	78.0	244881
40	Գրունտի խտացում պնևմոգլդոններով h=30սմ 6 անցումով	մ^3	3138	327	1026126
41	Գրունտների ջրում 30% չափով	մ^3	941.4	422	397271
42	Նոր պարապետների տեղադրման համար 6^0-IV կ. կարգի գրունտի փորում փոսորակներում ձեռքով խրամուղում , թողնելով գրունտը տեղում	մ^3	20.2	6255	126351
43	Պարապետի հիմքերի տակ ավազակոպճային հարթեցնող շերտի տեղադրում	մ^3	3.4	4836	16442
44	Նոր պարապետների հիմքերի տեղադրում խամքարից	մ^3	17.50	22890	400579
45	Նոր պարապետների տեղադրում խամքարից	մ^3	33.60	40622	1364899
46	Պարապետի սվաղ ցեմենտաավազային շաղախով	մ^2	232.5	2902	674715
47	ժամանակավոր արգելապատ բլոկների տեղադրում h=0.8մ,L=3մ	հատ	35	93569.53	3274934
48	ժամանակավոր արգելապատ բլոկների ապամոնտաժում h=0.8մ,L=3մ	հատ	35	2579	90265
				Ընդամենը՝2	163378500
				Ընդհանուրը՝1 և 2 բաժիններով	166699846
*Միավորի արժեքը ներառում է շահույթը և Ա.Ա.Հ.					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարություն
ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02565518
ՀՀ 900011020733

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբ. 6/2
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007045608
ՀՎՀՀ 01567429

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ139+350-կմ 139+450 վթարված հենապատի վերականգնման աշխատանքների
(2018 թ.)

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	**ավարտը**
1	Նախապատրաստական աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 15 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2018թ դեկտեմբերի 10-ը
2	Կառուցման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 15 օր հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 90 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2018թ դեկտեմբերի 10-ը
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո**	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 90 օր հետո բայց ոչ ուշ, քան 2018թ դեկտեմբերի 10-ը**

Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ139+350-կմ 139+450 վթարված հենապատի վերականգնման աշխատանքների
(ԸՆԴՀԱՆՈՒՐ)

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	**ավարտը**
1	Նախապատրաստական աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 15 օր հետո
2	Կառուցման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 15 օր հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 45 օր հետո

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 45 օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարություն
ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02565518
ՀՀ 900011020733

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբ. 6/2
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007045608
ՀՎՀՀ 01567429

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231177/72 45231177/571	*Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ139+350-կմ 139+450 վթարված հենապատի վերականգնման աշխատանքներ*	-	-	-	-	-	-	-	-	-	126626000	126626000	126626000	126626000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարություն
ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02565518
ՀՀ 900011020733

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբ. 6/2
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007045608
ՀՎՀՀ 01567429

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն